ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՂՈՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ

ԼԻԲԱՆԱՆԸ ՍՈՒԹԱՍԱՐԻՖՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ
(1861-1915 ԹԹ.)

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Դ. Ա. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ռ.Կ. Կարապետյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մայիսի 5-ին, ժ. 14.00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 "Համաշխարհային պատմություն" մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռ. Ղազարյան

ԹԵՍԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրության մաս կազմող Լիբանանի մութասարիֆության (1861-1915 թթ.) պատմության ամբողջական և համակողմանի հետազոտությունը կարևոր գիտական նշանակություն ունի Լիբանանի արդի շրջանի պատմական իրադարձությունները և ներքաղաքական գործընթացները լավագույնս հասկանալու և լուսաբանելու տեսանկյունից: Մասնավորապես կարևորվում է այն փաստը, որ մութասարիֆության ստեղծումով վերջ դրվեց Լիբանանի կրոնական համայնքների երկարատև հակամարտությանը՝ հնարավոր դարձնելով նրանց համատեղ խաղաղ գոյակցությունը:

Լիբանանի կրոնաղավանական համամասնական ներկայացուցչության պատմական ավանդույթները, ինչպես նաև ներկա քաղաքական իրավիճակը ավելի լավ պատկերացնելու և վերլուծելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն ներկայացնել այժմյան Լիբանանի մաս կազմող՝ միայն Լեռնալիբանանի տարածքն ընդգրկող օսմանյան ինքնավար նահանգի պատմությունը:

Լիբանանը մշտապես առանձնացել է բնակչության էթնիկ և կրոնաղավանական բազմազանությամբ: Լիբանանի կրոնական համայնքների միջև եղած ժամանակակից հակասություններն ունեն պատմական արմատներ: Անհրաժեշտ է նշել, որ 19-րդ դարի 40-50-ական թվականներին այդ հակասություններն ավելի սրվեցին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջամտության հետևանքով, ինչն էլ ի վերջո հանգեցրեց միջհամայնքային բախումների:

1860 թ. միջհամայնքային հակամարտությունից հետո եվրոպական տերությունների և օսմանյան կառավարության միջև ձեռք բերված համաձայնությամբ Լեռնալիբանանին տրված Կանոնադրության միջոցով փորձ արվեց խաղաղություն և հավասարակշռություն հաստատել բոլոր կրոնական համայնքների՝ մասնավորապես մարոնիների և դրուզների միջև: Համաձայն այդ Կանոնադրության՝ Լեռնալիբանանի կրոնական համայնքները՝ մարոնիները, դրուզները, հույն կաթոլիկները, հույն ուղղափառները, սունիի մուսուլմանները, շիա մուսուլմանները, համամասնական կարգով պետք է ներկայացված լինեին Լիբանանի մութասարիֆության վարչակառավարման համակարգում:

Լեռնալիբանանի կարգավիճակի վերաբերյալ հիմնական սահմանադրական փաստաթուղթը՝ Լեռնալիբանանի կանոնադրությունը, որը պատմագրությանն ավելի հայտնի է որպես «Լեռնալիբանանի օրգանական ստատուտ», ստորագրվեց 1861 թ. հունիսի 9-ին Կ. Պոլսում, որով Լեռնալիբանանը դարձավ ինքնավար նահանգ Օսմանյան կայսրության կազմում:

Լեռնալիբանանի օսմանահպատակ բրիստոնյա, ոչ տեղաբնակ կառավարիչն անմիջականորեն ենթարկվում էր օսմանյան կառավարությանը. նա հաշվետու էր նաև եվրոպական տերությունների առջև, որոնք այդ Կանոնադրության երաշխավորներն էին:

Կարևոր է փաստել, որ Լեռնալիբանանին վարչական ինքնավարություն շնորհելն իսկապես առաջընթաց քայլ էր Օսմանյան կայսրության նման հետամնաց, ռազմաավատատիրական երկրի համար: Հավելենք, որ 19-րդ դարի 30-50-ական թվականներին օսմանյան պետական որոշ գործիչներ անհրաժեշտ էին համարում զիջումների գնալ և եվրոպական օրինակով բարեփոխումներ անցկացնել՝ կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելու և տերության տարբեր մասերում հետագա հուզումները կանխելու համար[1]:

Պատմական հետագա զարգացումները ցույց տվեցին, որ Օսմանյան կայսրության կազմում 1861 թ. Լեռնալիբանանին շնորհված վարչական ինքնավարությունը կարևոր նշանակություն ունեցավ Լիբանանի անկախ պետության կայացման գործում: Թեև մինչ այդ էլ Լիբանանն ուներ ինքնավարության որոշ ավանդույթներ, սակայն հենց մութասարիֆության կազմավորումից հետո սկսվեց ընկալվել ոչ թե որպես Սիրիայի պատմաաշխարհագրական մաս, այլ վարչական և քաղաքական ինքնուրույն միավոր:

Լիբանանի մութասարիֆության կամ «Փոքր Լիբանանի» կազմավորումը հիմք դարձավ 1920 թ. «Մեծ Լիբանանի», իսկ 1943 թ.՝ Լիբանանի անկախ պետության ստեղծման համար:

Լեռնալիբանանին շնորհված վարչական ինքնավարության արդյունավետության ապացույցն է նաև այն, որ դա կիրառվեց Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող այլ տարածքներում: 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագրով հայերին ևս տրվելու էր վարչական ինքնավարություն Օսմանյան կայսրության կազմում, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով օսմանյան կառավարությունը չեղյալ հայտարարեց այդ համաձայնագիրը[2]:

Ատենախոսության թեման մեզ համար առավել կարևոր է, քանի որ Լիբանանի մութասարիֆության կազմավորման և գոյության ընթացքում էական դերակատարություն են ունեցել Լեռնալիբանանի հայ կառավարիչներ Կարապետ Արթին Դաուդյանը (Դաուդ փաշա) և Օհաննես Գույումջյանը:

---

[1] Մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 44-53:

[2] Հովհաննիսյան Ն., Օսմանյան կայսրությունում հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2002, XXI, էջ 80-97:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է Լիբանանի մութասարիֆության պատմությունը համապարփակ ուսումնասիրությամբ ներկայացնելու նպատակով: Դրան հասնելու համար ատենախոսն իր առջև դրել է խնդիրներ.

- Վերլուծել Լիբանանի սոցիալ-քաղաքական իրավիճակը մինչև 1861 թ. Կանոնադրությունը: Ուսումնասիրել Լիբանանի բնակչության կրոնադավանական առանձնահատկությունները, պարզաբանել այն պատճառները, որոնք նպաստեցին 1860 թ. միջհամայնքային հակամարտությանը:
- Ուսումնասիրել 1861 թ. Լեռնալիբանանին շնորհված Կանոնադրության առանձնահատկությունները: Ներկայացնել լիբանանցիների՝ մասնավորապես մարոնիների վերաբերմունքը Կանոնադրության և ոչ լիբանանցի կառավարչի նկատմամբ:
- Լուսաբանել և քննության ենթարկել օսմանյան կառավարության և եվրոպական տերությունների վարած քաղաքականությունը Լեռնալիբանանի նկատմամբ:
- Վերլուծել Լիբանանի մութասարիֆության բոլոր ութ կառավարիչների և մասնավորապես հայ կառավարիչներ Կարապետ Արթին Դաուդյանի և Օհաննես Գույումջյանի գործունեությունը:
- Ուսումնասիրել Լիբանանի մութասարիֆությունում տիրող իրավիճակը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո, երբ մութասարիֆության քաղաքական օրակարգում էին Լեռնալիբանանի հետագա կարգավիճակի և սահմանների հետ կապված հարցերը:
- Վերլուծել Լեռնալիբանանի կանոնադրության փոփոխությունները 1912 թ.: Հետազոտել պատմական այն իրադարձությունները, որոնց հետևանքով 1915 թ. վերջ դրվեց Լեռնալիբանանի ինքնավարությանը:
- Քննության ենթարկել «Օրգանական ստատուտի» արդյունավետությունը և նրա դերակատարությունը Լիբանանի պատմական հետագա զարգացումներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման դեռևս ամբողջական ուսումնասիրությամբ ներկայացված չէ հայկական պատմագրության մեջ: Հայ պատմաբանները հիմնականում ուսումնասիրել են մինչև 1861 թ. Լիբանանում տեղի ունեցած պատմական իրադարձությունները, իսկ մութասարիֆության հետագա պատմությանն անդրադարձել են միայն հպանցիկ:

Աշխատությունն իր բովանդակությամբ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել Լիբանանի մուբասարիֆության պատմությունը:

Լիբանանի պատմության նշված ժամանակահատվածին վերաբերող հայերեն և օտար լեզուներով (արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, ռուսերեն) հրատարակված արխիվային նյութերի, պատմական ու ժամանակակից աղբյուրների և աշխատությունների ուսումնասիրության հիման վրա առաջին անգամ փորձ է արվել լուսաբանել և ամբողջական վերլուծության ենթարկել Լիբանանի մուբասարիֆության գոյության ողջ ընթացքը և այդ շրջանում տեղի ունեցած ներքաղաքական գործընթացները:

Հետևաբար, ատենախոսությունը Լիբանանի մուբասարիֆության պատմության համակողմանի հետազոտության առաջին փորձն է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ատենախոսությունն ընդգրկում է 1861-1915 թթ. ժամանակահատվածը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ատենախոսը փորձել է համապարփակ ձևով ներկայացնել Լիբանանի մուբասարիֆության պատմության ողջ ընթացքը:

Նման մոտեցումը թույլ է տվել հետազոտել նշված ժամանակաշրջանում Լեռնալիբանանի կառավարման առանձնահատկությունները՝ պայմանավորված 1861 թ. Կանոնադրությամբ, որով հիմք դրվեց կրոնադավանական համամասնական ներկայացուցչության ավանդույթին: Լիբանանի պատմության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ ենք համարել անդրադառնալ նախորդ շրջանի կարևոր իրադարձություններին ևս: Համառոտ ձևով ներկայացրել ենք 1915 թ. հաջորդած պատմական զարգացումները, որը պայմանավորված է ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու անհրաժեշտությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքում դրված են Օսմանյան կայսրության մաս կազմող Լիբանանի մուբասարիֆության 1861-1915 թթ. սոցիալ-քաղաքական իրավիճակի հետ կապված հարցադրումների և տեսակետների քննական մեկնության և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները և եզրահանգումները կարող են օգտակար լինել Լիբանանի տվյալ ժամանակաշրջանի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև ժամանակակից փուլում Լիբանանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին ու հիմնախնդիրներին նվիրված դասախոսություններում, ուսումնասիրություններում և գիտական հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և պաշտոնական հավանության է արժանացել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնում: Դրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատանքների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աշխատությունը գրվել է հայերեն, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, ռուսերեն տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա:

Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուները, հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, ինչպես նաև դիվանագետների, ճանապարհորդների հուշերը, պարբերականները:

Ատենախոսության համար սկզբնաղբյուր են ծառայել Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության հրատարակած արխիվային նյութերը[3], որոնցում ներկայացված Ֆրանսիայի արտգործնախարարներ Դ. դը Լյուիսի, Լ. Ռ. դը Մուստիեի և Կ. Պոլսում, Բեյրութում գտնվող ֆրանսիացի դիվանագետների հաղորդագրությունները, ինչպես նաև Լեռնալիբանանին վերաբերող միջազգային արձանագրությունները մեծապես նպաստել են ուսումնասիրվող թեմային վերաբերող տարբեր հարցերի լուսաբանմանը:

[3] Affaires étrangères, documents diplomatiques (Annuel), date d'édition 1861-1873, Paris, Archives diplomatiques: recueil de diplomatie et d'histoire, date d'édition 1861-1914, Paris.

Դրուզ-մարոնիական հակամարտության, այդ խնդրին օսմանյան իշխանությունների և եվրոպական տերությունների միջամտության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ ենք ստանում Սիրիայում Անգլիայի գլխավոր հյուպատոս գնդապետ Ռոուզի հաղորդագրություններից[4] ուղղված Անգլիայի արտգործնախարար Ջ. Աբերդինին և Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Չ. Ս. Քաննինգին:

Լեռնալիբանանի կառավարիչների գործունեության և մութասարիֆությանը վերաբերող կարևոր իրադարձությունների լուսաբանման գործում էական նշանակություն են ունեցել Դ. Նիկոլայիդիսի[5], Ի. դը Տեստայի[6], Գ. Նորատունկյանի[7] կողմից շրջանառության մեջ դրված օսմանյան փաստաթղթերի, միջազգային պայմանագրերի, օրենքների ժողովածուները, 19-րդ դարում Փարիզում և Կ. Պոլսում լույս տեսած տարեգրքերը[8], Ի. Ք. Խալիֆայի կողմից 2008 թ. Բեյրութում հրատարակված Լեռնալիբանանին վերաբերող օսմանյան արխիվային փաստաթղթերը[9]:

Սկզբնաղբյուր են հանդիսացել նաև Բեյրութում Ռուսաստանի հյուպատոսի պաշտոնը զբաղեցրած Կ. Մ. Բազիլի[10], Անգլիայի հյուպատոս Չ. Չերչիլի[11], անգլիացի դիվանագետ և հրապարակախոս Դ. Ուրքուհարտի[12], ամերիկացի միսիոներ Հ. Ջեսուպի[13], ֆրանսիացի դիվանագետներ Ա. դը Գիսի[14] և Մ. դը Վոգեի[15] արժեքավոր հուշագրությունները Լիբանանի վերաբերյալ:

---

[4] Correspondence relative to the affairs of Syria: presented to the house of parliament, by command of Her Majesty, July 1845, (in 3 vol.), vol. 2, by Great Britain, Foreign Office, London.

[5] Législation ottomane ou recueil des lois, réglements, ordonnances, traités, capitulations et autres documents officiels de l'Empire Ottoman, (en 7 vol.), vol. 2, date d'édition 1873-1888, Constantinople.

[6] Testa Baron I. de, Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances etrangeres, date d'édition 1864-1911, (en 11 vol.), vol. 1, 3, Paris.

[7] Noradounghian G., Recueil d'actes internationaux de l'Empire Ottoman, (en 4 vol.), vol. 3, 4, date d'édition 1897-1903, Paris.

[8] Annuaire des deux monde: histoire générale des divers états, date d'édition 1851-1868, Paris, Annuaire diplomatique de l'Empire français, 1866 (A 9), date d'édition 1858-1870, Paris, Annuaire Orentale du commerce, de l'administration et de la magistrature, 1891 (A 10), publiée avec l'autorisation du Ministère impérial de l'instruction publique, Constantinople.

[9] خليفة عصام كمال، وثائق لبنانية من الأرشيف العثماني، ١٨٤١ -١٩١٣، بيروت، ٢٠٠٨.

[10] Базили К., Сирия и Палестина под турецким правительством в историческом и политическом отношениях, 1962, Москва.

[11] Churchil Ch. H., The Druzes and the Maronites under the Turkish rule, from 1840 to 1860, London, 1862, p. 285. Նույնի, Mount Lebanon, A ten years' residence, from 1842 to 1852, (in 3 vol.), vol. 2, London, 1853.

[12] Urquhart D., The Lebanon: (Mount Souria) A history and a diary, (in 2 vol.), vol. 1, London, 1860.

[13] Jessup H. H., Fifty-three years in Syria, (in 2 vol.), vol. 1, New York.

[14] Guys H., Beyrout et le Liban: relation d'un séjour de plusieurs années dans ce pays, Paris, (en 2 vol.), vol, 2, 1850.

Լիբանանի մութասարիֆության վերջին տարիների պատմության մասին կարևոր տեղեկություններ ենք ստանում վերջին կառավարիչ Օ. Գույումջյանի[16] հուշագրությունից, որը հրատարակվել է վերջերս՝ Փարիզում:

Անհրաժեշտ ենք համարում նաև նշել Յ. Ա. Շաբրայի[17], Ջ. Շելթմայի կողմից անգլերեն թարգմանված Ի. Աբգարիուսի[18], Թ. ալ-Շիդյակի՝[19] 1840-ից 1860-ական թվականների իրադարձություններին վերաբերող փաստագրական աշխատությունները, որոնք լույս են տեսել 20-րդ դարում: Արաբերեն աղբյուրներից հարկ է նշել նաև Մուզաֆեր փաշայի կառավարման շրջանում մութասարիֆության պաշտոնյա Ս. Հ. Հիշիի[20] հուշագրությունը, որն ավելի ուշ է հրատարակվել: Իր աշխատանքում Հիշին անդրադառնում է նաև նախորդ կառավարիչների գործունեությանը, ինչպես նաև՝ Մուզաֆերին հաջորդած Յուսուֆ փաշային:

Դրուզ-մարոնիական հակամարտության և Լիբանանի մութասարիֆության կազմավորման շրջանի ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուրներ են նաև 1860 թ. Սիրիայում գտնված և ֆրանսիական զինվորական արշավախմբի հետ առնչություններ ունեցած պատմաբան-հրապարակախոսներ Բ. Պուժուլայի[21], Է. Լուեի[22], Է. Պուժադի[23], Ֆ. Լընորմանի[24] հուշագրությունները, Կ. դը Ռոշմոնտեի կողմից հրատարակված գեներալ Դյուկրոյի նամակները[25], Լ. դը Բոդիկուրի պատմական ակնարկը[26]: Այս աշխատություններն ուսումնասիրվել և օգտագործվել են որոշ վերապահումներով, քանի որ դրանցում առկա են հակադրուզական տրամադրություններ:

Լեռնալիբանանի և նրա բնակիչների մասին արժեքավոր վկայություններ են նաև եվրոպացի ճանապարհորդների աշխատությունները,

---

[15] Vogüé M. de, Les événements de Syrie, Paris, 1860.

[16] Kouyoumdjian, Ohannès Phacha, Le Liban a la veille et au début de la guerre, Mémoires d'un gouverneur, 1913-1915, Paris, 2003.

[17] أ أبو شقرا يوسف (تأليف)، (تحقيق- أريف أبو شقرا)، الحركات في لبنان إلى عهد المتصرفية، بيروت، ١٩٥٢.

[18] (Abkarius), Scheltema J. F., The Lebanon in turmoil. Syria and the Powers in 1860. Book of the marvels of the time concerning the massacres in the Arab country, by Iskander ibn Yakub Abkarius, New Haven, 1920.

[19] الشدياق طنوس بن يوسف، اخبار الأعيان في جبل لبنان،(في جزءين)، جزء الثاني، بيروت، ١٩٥٤.

[20] حشي سليم حسن، يوميات لبنان في أيام المتصرفية، بيروتت، ١٩٧٣.

[21] Poujoulat B., La vérité sur la Syrie et l'expédition française, Paris, 1861.

[22] Louet E., Expédition de Syrie, Beyrouth, Le Liban, Jérusalem, Paris, 1862.

[23] Poujade E., Le Liban et La Syrie, 1845-1860, Paris, 1860.

[24] Lenormant F., Histoire des massacres de Syrie en 1860, Paris, p. 131. Նույնի, Les derniers evenements de Syrie. Une persecution du christianisme en 1860, Paris, 1860.

[25] Rochmonteix C. de, Le Liban et l'expédition française en Syrie (1860-1861), Documents inédits du Général A. Ducrot, Paris, 1921, p. 351.

[26] Baudicour L. de, La France au Liban, Paris, 1879, p. 357.

որոնցից պետք է հատկապես առանձնացնել ֆրանսիացի գիտնականներ Ֆ. Վոլնեյին[27], Գ. Շարմսին[28], Վ. Կյոինեին[29]:

Ատենախոսության մեջ քննարկվող տարբեր հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են Ն. Հովհաննիսյանի[30], Ե. Նաջարյանի[31] Լիբանանի պատմությանը վերաբերող արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Ե. Պողոսյանը[32], Ս. Վարժապետյանը[33], նույնպես իրենց աշխատություններում անդրադառնում են Լեռնալիբանանի հայազգի կառավարիչներ Կարապետ Արքին Դաուդյանի (Դաուդ փաշա) և Օ. Գույումջյանի կյանքին, մասնակիորեն նաև՝ նրանց գործունեությանը Լեռնալիբանանում:

Աշխատությանը մեծապես նպաստել են արաբ հեղինակների՝ արաբերենով, ֆրանսերենով, անգլերենով գրված ուսումնասիրությունները: Մ. Ժուպլենի (Բ. Նուջայիմ)[34], Խ. Խայրալլահի[35], Ժ. Սամնեի[36], աշխատանքներում բավականին մանրամասն անդրադարձ է կատարվում Լիբանանի մութասարիֆության ձևավորմանը, մութասարիֆների գործունեությանը: Նշենք, որ Ժուպլենի աշխատությունն ուսումնասիրվել և օգտագործվել է որոշ վերապահումներով, քանի որ հեղինակի մոտ շատ են զգայական վերլուծությունները: Նա բոլոր հարցերը քննարկում է միայն մարոնիների տեսանկյունից: Դաուդ փաշային համարում է դրուզասեր, որը իրականությանը չի համապատասխանում: Ժուպլենի կարծիքով Ֆրանկո և Ռուստամ փաշաներն ավելի լավ են իրենց դրսևորել որպես կառավարիչներ:

[27] Volney C.-F., Voyage en Syrie et en Egypte, pendant les années 1783, 1784 et 1785, (en 2 vol.), vol. 2, Paris, 1787.
[28] Charmes G., Voyage en Syrie, Impressions et souvenirs, Paris, 1891.
[29] Cuinet V., Syrie, Liban et Palestine, Paris, 1896.
[30] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր II, օսմանյան տիրապետության շրջան, 1516-1918 թթ., Երևան, 2004: Նույնի, Օսմանյան կայսրությունում հայկական հարցի լուծման լիբանանյան մոդելը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, Երևան, 2002, էջ 80-97:
[31] Նաջարյան Ե., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985:
[32] Պողոսյան Ե., Կարապետ Արքին փաշա Տաուտեան,Կուսակալ և ընդհանուր կառավարիչ Լիբանանի, Վիեննա, 1949: Նույնի, Գույումճեան և Թընկըրեան գերդաստանները, Վիեննա, 1951:
[33] Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մեջ, Պատմություն լիբանանահայ գաղութի՝ հնագույն դարերեն մինչև Ա. ընդհ. պատերազմին վերջավորությունը, Բեյրութ, 1951:
[34] Jouplain M. (Bulus Nujaim), La question du Liban, Etude d'histoire diplomatique et de droit international, Paris, 1908.
[35] Khaïrallah K. T., Les gouverneurs du Liban, "La Correspondence d'Orient", Revue econom., polit. et litt., Paris, 1913/10/16 (N. 122), pp. 350-355. Նույնի, La Syrie: Territoire. Origines éthniques et politiques, evolution. Esquisses: La vie sociale et littéraire, la vie politique en Syrie et au Liban, Paris, 1912.
[36] Samné G., La Syrie, Paris, 1921.

Սամնեն և Խայրալլահն ավելի օբյեկտիվորեն են վերլուծել Լեռնալիբանանի կառավարիչների գործունեությունը:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Կ. Հաքիմի[37], Դ. Ամունի[38] աշխատությունները, որոնցում հեղինակներն անդրադարձել են Լիբանանի մութասարիֆության, ինչպես նաև՝ նախորդող և հաջորդող ժամանակաշրջանների պատմության առանցքային հարցերին: Կ. Հաքիմը կարևորում է մութասարիֆության դերը 1920 թ. «Մեծ Լիբանանի» ստեղծման հարցում:

Լիբանանի մութասարիֆության պատմությանը նվիրված արաբ հեղինակների աշխատություններից հարկ է առանձնացնել Յ. ալ-Հաքիմիի[39], Ա. Տարրինի[40], Ա. ալ-Մալահի[41] աշխատությունները: Նշված հեղինակների ուսումնասիրությունները չափազանց կարևոր տեղեկություններ են պարունակում Լիբանանի մութասարիֆության պատմության վերաբերյալ, չնայած պետք է նշել, որ դրանցում շատ է տեղական, առօրեական իրադարձությունների շարադրումը: Ա. Տարրինը հիմնականում անդրադարձել է առաջին երեք կառավարիչներին՝ բարձր գնահատելով հատկապես Դաուդ փաշայի գործունեությունը:

Յ. ալ-Հաքիմի աշխատությունն ավելի կարևորվում է նրանով, որ հեղինակն ավելի մանրամասն է անդրադարձել վերջին կառավարիչ Օ. Գույումջյանի կառավարման շրջանին:

Մ. Ա. Թարհինին[42] անդրադառնում է Լիբանանի կրոնադավանական համամասնական ներկայացուցչության ավանդույթներին, որի հիմքը դրվել էր 1861 թ. Կանոնադրությամբ: Թարհինին լուսաբանում է նաև մութասարիֆության կազմավորման ժամանակաշրջանը:

Նյութի շարադրման տեսանկյունից չափազանց օգտակար են եղել Ռ. Մակդիսիի[43], Ժ. Խուրիի[44], Լ. Ֆավազի[45], Ժ. Հաջարի[46], Ի. բեկ ալ-Ասուադի[47],

[37] Hakim C., The origins of the Lebanese national idea, 1840-1920, Berkeley, 2013.
[38] Ammoun D., Histoire du Liban contemporain (1860-1943), Paris, 1997, p. 528.
[39] الحكيم يوسف، بيروت و لبنان في عهد العثمان، بيروت، ١٩٨٠.
[40] طربين أحمد، لبنان منذ اهد المتصرفية الى بداية الإنتداب ١٨٦١-١٩٢١، القاهرة، ١٩٦٨.
[41] الملاح عبد الله، متصرفية جبل لبنان في عهد مظفر باشا، بيروت، ١٩٨٥.
[42] ترحني محمد أحمد، الأسس التاريخية لنظام لبنان الطائفي، بيروت، ١٩٨١.
[43] Makdisi U., The culture of sectarianism: community, history and violence in nineteenth-century Ottoman Lebanon, Berkeley, Los Angeles, 2000.
[44] Khoury G. D., La France et l'Orient Arabe, Naissance du Liban moderne 1914-1920, Paris, 1993.
[45] Fawaz L. T., An occasion for war. Civil conflict in Lebanon and Damascus in 1860, Berkeley and Los Angeles, 1994.
[46] Hajjar J., L'Europe et les destinées du Proche-Orient, (1848-1870), (en 3 tomes), tome 3, 1988.
[47] الأسود إبراهيم بك، تاريخ لبنان، في مجلدين، جلد١، بيروت، ١٩٢٥.

Ա. Սուլթանի[48], Ա. Ուդաթի[49], Վ. Քառասարանիի[50], Ա. Առադի[51], Ա. Հանայի[52] աշխատանքները: Նշված հեղինակների աշխատություններում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանն ամբողջությամբ ներկայացված չէ: Նրանցում խոսվում է մեր կողմից ուսումնասիրվող թեմային վերաբերող տարբեր հարցերի մասին: Ա. Ուդաթը, Վ. Քառասարանին ներկայացնում և վերլուծում են Լիբանանի վարչակառավարման համակարգի առանձնահատկությունները: Ա. Ուդաթը կարևորում է մութասարիֆության դերը Լիբանանի անկախ պետության կայացման գործում:

Ֆ. Հիթթիի[53], Ք. Սալիբիի[54], Ա. Հուրանիի[55] աշխատություններում ևս մակերեսային անդրադարձ է կատարվում Լիբանանի պատմության նշված ժամանակաշրջանին:

Արևմտյան հեղինակներից անհրաժեշտ է առանձնացնել Է. Դ. Աբարլիի[56], Ջ. Սպագնոլոյի[57] աշխատություններն ու հոդվածները, ովքեր համակողմանիորեն ներկայացրել են Լիբանանի մութասարիֆության պատմությունը, սակայն վերջիններս էլ հպանցիկ անդրադարձ են կատարել Օհաննես Գուլումջյանի կառավարան շրջանին: Աբարլին շատ հարցերում փորձել է արդարացել օսմանյան կառավարության վարած քաղաքականությունը Լեռնալիբանանում, իսկ Սպագնոլոն հաճախ է քննադատում ֆրանսիացիներին Լեռնալիբանանի ներքին հարցերին միջամտելու համար:

Լիբանանի պատմությանն առնչվող՝ այդ թվում նաև մութասարիֆության շրջանին վերաբերող տարբեր հարցերին նվիրված արևմտյան ուսումնասիրողների աշխատանքներից անհրաժեշտ է առանձնացնել նաև Ժ. Նանտեի[58], Ն. Պիկոդուի[59], Գ. դը Ալոյի[60], Պ. Ռոնդոյի[61],

[48] سلطان علي، تاريخ سورية (١٩٠٨- ١٩١٨)، دمشق، ١٩٨٧.
[49] عويدات عبده، النظم الدستورية في لبنان و البلاد العربية العالم، بيروت، ١٩٦١.
[50] كوثراني وجيه، الإتجاهات الأجتماعية- السياسة في جبل لبنان و المشريق العربي، ١٨٦٠-١٩٢٠، بيروت، ١٩٧٦.
[51] عوض عبد العزيز، الادارة العثمانية في ولاية سورية ١٨٦٤-١٩١٤، القاهرة، ١٩٦٩.
[52] حنا عبد الله، القضية الزراعية و الحركات الفلاحية في سورية و لبنان، (١٨٢٠-١٩٢٠)، بيروت، ١٩٨٥.
[53] Hitti Ph., History of Syria: Including Lebanon and Palestine, London, 1951.
[54] Салиби К. С., Очерки по истории Ливана, пер. с англ., Москва, 1969.
[55] Hourani A. H., Syria and Lebanon. A political essay, London, 1946.
[56] Akarli E. D., The long peace: Ottoman Lebanon, 1861-1920, Berkeley, 1993. Նույնի, The administrative council of Mount Lebanon, in Lebanon: A history of conflict and consensus, London, 1988, pp.79-100.
[57] Spagnolo J., France and Ottoman Lebanon 1861-1914, London, 1977. Նույնի, Franco-British rivalry in the Middle East and its operation in the Lebanese Problem, in Lebanon: A history of conflict and consensus, London,1988, pp. 101-123.
[58] Nantet J., Histoire du Liban, Paris,1989, p. 364.
[59] Picaudou N., La dechirure libanaise, Paris, 1989, p. 274.
[60] Alaux G. de, "Le Liban et Davud-Pacha", Revue des deux mondes, T. 58, 1865, Paris, pp. 139-168.

Չ. Վինսլոյի[62], Մ. Զամիրի[63], Վ. Հարիսի[64], Է. Ֆ. Սիզարի[65], Դ. Շվալիեի[66] աշխատություններն ու հոդվածները:

Առենախոսության մեջ օգտագործվել են թուրքերեն աշխատանքներ: Դրանցից անհրաժեշտ է առանձնացնել Մ. Քըլըչի[67], Ա. Բիլգենօղլուի[68], Հ. Ըյուլմանի[69] աշխատանքները: Քըլըչն անդրադարձել է օսմանյան կառավարությունում պաշտոններ զբաղեցրած հայերի՝ նաև Դաուդ փաշայի գործունեությանը: Բիլգենօղլուն անդրադառնում է 1908 թ. հեղափոխությունից հետո Լիբանանի մութասարիֆության ինքնավարության հետագա ամրապնդման մասին լիբանանցիների ներկայացրած պահանջներին: Ըյուլմանը, պաշտպանելով օսմանյան կառավարությանը, քննադատում է Անգլիային և Ֆրանսիային մարոնիների և դրուզների միջև թշնամանք հրահրելու համար:

Ռուս ուսումնասիրողների կողմից քննարկվող ժամանակաշրջանի հանդեպ առանձնակի հետաքրքրություն չի ցուցաբերվել: Նրանցից Ի. Սմիլյանսկայան[70] հիմնականում անդրադաձել է 1858 թ. Քեսրուանի ապստամբությանը, 1860 թ. միջհամայնքային կոտորածներին: Մ. Պանչենկովան[71] մանրամասն ներկայացրել է 1860 թ. ֆրանսիական զինարշավը:

Լիբանանում տեղի ունեցող զարգացումներն ու իրադարձությունները լուսաբանել և ներկայացրել են ժամանակի ֆրանսիական "Le Temps", "Le Figaro", "Le Matin", "Le Petit Parisien", "L'Humanité" թերթերը, "La Jeune

[61] Rondot P., Les chretiens d'Orient, Paris, 1955. Նույնի, Le destin des chrétiens d'Orient, Politique étrangère, N. 1, 1946, 11e année, Paris, pp. 41-60. Նույնի, Les structures socio-politiques de la nation libanaise, Revue française de science politique, 4e anneé, N. 1, Paris, 1954, pp. 80-104. Նույնի, L'Intervention internationale de 1860 au Liban, Etudes, 1960/11 (T 307, N 2) Paris, pp. 203-212.
[62] Winslow Ch., Lebanon: War and politics in a fragmented society, London, 1996.
[63] Zamir M., The formation of Modern Lebanon, London, 1985.
[64] Harris W., Faces of Lebanon: sects, wars and global extensions, Princeton, 1997.
[65] Caesar E. F., Politics of interventionism in Ottoman Lebanon 1830-1861, London, 2000.
[66] Chevallier D., La société du Mont Liban a l'époque de la révolution industrielle en Europe, Paris, 1971, Նույնի, Aspects socieux de la Question d'Orient: aux origines des troubles agraires libanais en 1858, Annales. Économies, Sociétés, Civilisations, 14e année, N 1, Paris, 1959, pp. 35-64.
[67] Kiliç M., Tanzimat döneminde Osmanli Hariciye Nezâreti'nin Ermeni memurlari, Ankara Üniversitesi Dil ve Tarih Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştirmalari Dergisi, cilt 31 (sayi 51), Ankara, 2012, s. 93-124.
[68] Bilgenoğlu A., Osmanli devleti'nde Arap milliyetçi cemiyetleri, Antalya, 2007.
[69] Ülman H., 1840-1845 arasinda Suriye ve Lübnan'in durumu ve milletlerarasi politika, Ankara Üniversitesi Siyasal Bilgiler Facültesi Dergisi, cilt 18 (sayi 3), Ankara, 1963, s. 243-268.
[70] Смилянская И., Крестьянское движение в Ливане в первой половине XIX в., Москва, 1965.
[71] Панченкова М., Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860-1861, Москва, 1966.

Turquie" շաբաթաթերթը, Կ. Պոլսում տպագրվող "Les Nouvelles d'Orient" շաբաթաթերթը, Ֆրանսիայում լույս տեսնող "La Correspondance d'Orient", "Revue politique et parlementaire", "Revue Historique", "Etude", ամսագրերը, Բեյրութում լույս տեսնող "الجنان" ամսագիրը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է առաջաբանից, երեք գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ԱՌԱՋԱԲԱՆՈՒՄ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, ներկայացվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ԼԻԲԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 1861-1868 ԹԹ.», բաղկացած է երեք ենթագլխից՝ «Լիբանանի պատմական զարգացումները մինչև 1860 թ. և բնակչության կրոնադավանական առանձնահատկությունները», «Միջհամայնքային հակամարտությունը և Լեռնալիբանանի Օրգանական ստատուտը 1861 թ.», «Կարապետ Արբին Դաուդյանը՝ (Դաուդ փաշա) Լեռնալիբանանի առաջին կառավարիչ (1861-1868 թթ.)»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են Լիբանանի պատմական զարգացումները մինչև 1860 թ., Լիբանանի կրոնական համայնքների՝ մասնավորապես մարոնիների և դրուզների միջև ծագած թշնամանքի և հակամարտության պատճառները: Երկրորդ ենթագլխում քննարկվում է 1860 թ. դրուզ-մարոնիական հակամարտությունը, որի արդյունքում հազարավոր քրիստոնյաներ զոհվեցին: Այս ենթագլխում քննարկվում է նաև եվրոպական տերությունների միջամտությունը լիբանանյան հարցի կարգավորմանը, մանրամասնորեն ներկայացվում է 1861 թվականի Լեռնալիբանանի կանոնադրությունը, որով այդ երկրամասին ինքնավար մութասարիֆության կարգավիճակ շնորհվեց Օսմանյան կայսրության կազմում:

Երրորդ ենթագլխում մանրամասնորեն ներկայացվում և մեկնաբանվում է Կարապետ Արբին Դաուդյանի գործունեությունը՝ որպես Լեռնալիբանանի առաջին կառավարիչ, ում դերակատարությունը Լիբանանի մութասարիֆության կազմավորման գործում դրական են գնահատում և՛ հայ, և՛ օտարազգի հեղինակները: Քննարկվում է առաջին կառավարչի շուրջ վեց ամյա պայքարը Յուսուֆ Քարամի և նրա կողմնակիցների դեմ, որից հետո միայն Դաուդ փաշային հաջողվեց խաղաղություն հաստատել

Լեռնալիբանանում և բոլոր լիբանանցիների՝ այդ թվում նաև մարոնիների համար ընդունելի դարձնել 1861 թ. Կանոնադրությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «ԼԻԲԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1868-1892 ԹԹ.», բաղկացած է երեք ենթագլխից՝ «Լեռնալիբանանը Ֆրանկո փաշայի կառավարման տարիներին (1868-1873 թթ.)», «Վարչական և տնտեսական բարեփոխումները Ռուստամ փաշայի կառավարման տարիներին (1873-1883 թթ.)», «Վասա փաշայի հարաբերությունները Ֆրանսիայի հյուպատոսության և մարոնիական եկեղեցու հետ (1883-1892 թթ.)»:

Երկրորդ գլխում փորձ է արվել մանրամասնորեն վերլուծել Լիբանանի մութասարիֆության կառավարման առանձնահատկությունները, նշված ժամանակաշրջանում Լեռնալիբանանի կառավարիչներ Ֆրանկո Նասրիի կամ Ֆրանկո Քուսա փաշայի, Ռուստամ և Վասա փաշաների գործունեությունը:

Ներկայացրել և մեկնաբանել ենք նաև օսմանյան կառավարության և Լիբանանի մութասարիֆության Կանոնադրության երաշխավորներ հանդիսացող եվրոպական տերությունների հարաբերություններն ու նրանց միջամտությունը Լիբանանի կառավարիչների գործունեությանը:

Երրորդ գլուխը՝ «ԼԻԲԱՆԱՆԻ ՄՈՒԹԱՍԱՐԻՖՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1892-1915 ԹԹ.», բաղկացած է չորս ենթագլխից՝ «Նաում փաշան՝ Լիբանանի մութասարիֆության կառավարիչ (1892-1902 թթ.)», «Մուզաֆեր փաշա (1902-1907 թթ.). սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման փորձեր», «Մութասարիֆությունը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո և Յուսուֆ փաշան (1907-1912 թթ.)», «Կանոնադրության փոփոխությունները 1912 թ. և Օհաննես Գույումջյանը՝ Լեռնալիբանանի վերջին կառավարիչ (1912-1915 թթ.)»:

Երրորդ գլխում մանրամասն նկարագրվել են Լեռնալիբանանի կառավարման առանձնահատկությունները Նաում, Մուզաֆեր, Յուսուֆ և Օհաննես փաշաների կառավարման շրջանում:

Քննարկվել են 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո լիբանանցիների ներկայացրած պահանջները՝ Լեռնալիբանանի հետագա կարգավիճակի և սահմանների վերաբերյալ: Մանրամասնորեն լուսաբանվել է նաև Կանոնադրության փոփոխությունները 1912 թ., ինչպես նաև ներկայացվել և վերլուծվել է վերջին կառավարիչ Օ. Գույումջյանի գործունեությունը: Չորրորդ ենթագլխում քննարկել ենք պատմական այն իրադարձությունները, որոնց արդյունքում 1915 թ. հուլիսին օսմանյան կառավարությունը պաշտոնապես չեղյալ հայտարարեց Լեռնալիբանանի հատուկ կարգավիճակին վերաբերող արձանագրությունները:

ՎԵՐՋԱԲԱՆՈՒՄ՝ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

• 1840-1860 թթ. եվրոպական տերությունների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա) միջամտությունը նպաստեց Լիբանանի համայնքների միջև թշնամանքի և սոցիալական պառակտման խորացմանը: Լիբանանի քրիստոնյաների և մուսուլմանների՝ մասնավորապես մարոնիների և դրուզների միջև պարբերաբար տեղի էին ունենում զինված բախումներ: Մարոնիներին հովանավորում էր Ֆրանսիան, դրուզներին՝ Մեծ Բրիտանիան: Օսմանյան իշխանություններն էլ իրենց հերթին էին բախումներ հրահրում այդ համայնքների միջև՝ Լիբանանի ինքնավարության ավանդույթներին վերջ դնելու նպատակով: Այդ ամենը դաժան արյունահեղության հանգեցրեց 1860 թ. գարնանը, որին զոհ գնացին հազարավոր քրիստոնյաներ: Դրան հետևեց ֆրանսիական զորքերի ներխուժումը 1860 թ. օգոստոսին և լիբանանյան հարցի միջազգային կարգավորումը 1861 թ. հունիսի 9-ի Կանոնադրությամբ: (Նշենք, որ 1861 թվականի Կանոնադրությունը որոշակի փոփոխությունների ենթարկվեց 1864 թ.: Փոփոխված Կանոնադրությունը թուլացրեց Լեռնալիբանանի կրոնական համայնքների առաջնորդների դիրքերը՝ ամրապնդելով մութասարիֆի իշխանությունը):

• Համաձայն Կանոնադրության՝ Լեռնալիբանանը կառավարելու էր քրիստոնյա, ոչ լիբանանցի կառավարիչը, ով պետք է օժտված լիներ գործադիր իշխանության բոլոր լիազորություններով: Նրան կից գործում էր Լիբանանի բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչներից համամասնական կարգով կազմված Վարչական խորհուրդ, որն օժտված էր խորհրդակցական գործառույթներով:

• 1861-1867 թթ. ընթացքում լիբանանցիները՝ մասնավորապես մարոնիները, չկարողացան ճիշտ գնահատել Կանոնադրությամբ իրենց շնորհված արտոնությունները: Լեռնալիբանանի հյուսիսում մարոնիներն իրենց առաջնորդ շեյխ Յուսուֆ Քարամի գլխավորությամբ, նաև մարոնի եկեղեցու աջակցությամբ ապստամբեցին ոչ լիբանանցի կառավարչի դեմ և հրաժարվեցին ընդունել Կանոնադրությունը: Լիբանանի առաջին կառավարիչ Դաուդ փաշայի ջանքերով, ֆրանսիացի և անգլիացի դիվանագետների, ինչպես նաև օսմանյան որոշ բարձրաստիճան պաշտոնյաների աջակցությամբ հնարավոր եղավ հնազանդեցնել մարոնիներին և բոլորի համար ընդունելի դարձնել Կանոնադրությունը:

• 1868-1892 թթ. ընթացքում կառավարած մութասարիֆները հիմնականում կարողացան ապահովել Լեռնալիբանանի խաղաղությունը և կայունությունը: Դաուդ փաշային հաջորդած մութասարիֆների կառավարման շրջանում լուրջ հուզումներ տեղի չունեցան: Լիբանանցիները սկսել էին գիտակցել Կանոնադրությամբ իրենց շնորհված արտոնությունների

կարևորությունը և պահանջել, որ մութասարիֆները չխախտեն Կանոնադրության դրույթները:

Այդ ընթացքում ֆրանսիացիները սկսել էին ավելի ակտիվ միջամտել մութասարիֆության ներքին գործերին՝ (հատկապես Վասա փաշայի կառավարման շրջանում) անհանգստանալով, որ Անգլիայի կողմից Եգիպտոսի գրավումից հետո (1882 թ.) կարող էին կորցնել իրենց ազդեցությունը Սիրիայում և Լիբանանում:

• 1892-1915 թթ. Օսմանյան կայսրության անընդհատ խորացող քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում մութասարիֆների համար ավելի բարդ էր Լեռնալիբանանի խաղաղությունն ապահովելը և օսմանյան կառավարությանն ու եվրոպական տերություններին միջամտելու առիթ չտալը: 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո լիբանանցի գործիչները, օգտվելով կայսրությունում տիրող խառնաշփոթ իրավիճակից, Կանոնադրությունը վերանայելու և Լիբանանի մութասարիֆության սահմաններն ընդարձակելու պահանջներ էին ներկայացնում: 1912 թ. Լեռնալիբանանի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարվեցին՝ լիբանանցիների հիմնական պահանջները բավարարելու համար. փոփոխությունները վերաբերում էին հարկային, ընտրական, դատական համակարգերին, Վարչական խորհրդի լիազորությունների ընդլայնմանը: Լեռնալիբանանն ունենալու էր երկու նավահանգիստ, որոնցից մեկը պետք է լիներ Ջունիում՝ մարոնիաբնակ Քեսրուանում, մյուսը՝ դրուզաբնակ Շուֆի Նաբի Յունիս գյուղում: Այդ փոփոխությունները չարդարացրեցին հատկապես քրիստոնյա լիբանանցիների ապասելիքները, ովքեր պահանջում էին ավելի ընդարձակ սահմաններով քրիստոնեական պետություն՝ Ֆրանսիայի խնամակալության ներքո:

• Իր գոյության 54 տարվա ընթացքում Լիբանանի մութասարիֆությունն ունեցավ ութ կառավարիչ՝ Դաուդ փաշան (հայ կաթոլիկ 1861-1868 թթ.), Ֆրանկո փաշան (հույն կաթոլիկ 1868-1873 թթ.), Ռուստամ փաշան (իտալացի կաթոլիկ 1873-1883 թթ.), Վասա փաշան (ալբանացի կաթոլիկ 1883-1897 թթ.), Նաում փաշան՝ Ֆրանկո փաշայի փեսան (հույն կաթոլիկ 1897-1902 թթ.), Մուզաֆեր փաշան (լեհ կաթոլիկ 1902-1907 թթ.), Յուսուֆ փաշան՝ Ֆրանկո փաշայի որդին (հույն կաթոլիկ1907-1912 թթ.), Օհաննես փաշա Գույումջյանը (հայ կաթոլիկ 1912-1915 թթ.): Նրանք բոլորն էլ հիմնականում մեծ պատասխանատվությամբ կատարեցին իրենց վրա դրված պարտականությունները՝ բացառությամբ իշխանության չարաշահման առանձին դեպքերի: Այս կառավարիչներից իրենց հետևողականությամբ և կառավարչական ունակություններով առավել աչքի ընկան Դաուդ և Ռուստամ փաշաները: Ռուստամ փաշան բարեփոխումներ իրականացրեց վարչական, դատական ոլորտներում, կարողացավ կարգավորել ֆինանսական խնդիրներն իր խնայողական քաղաքականության շնորհիվ: Ֆրանկո և Նաում փաշաների

կառավարման տարիներին ճանապարհների, կամուրջների շինարարական և բարեկարգման աշխատանքներ իրականացվեցին: Վասա և Մուզաֆեր փաշաներն ավելի թույլ գտնվեցին որպես կառավարիչներ: Նրանց կառավարման տարիներին կոռուպցիայի աճ նկատվեց մութասարիֆությունում: Յուսուֆ փաշան, ում նշանակվելուց մեկ տարի անց տեղի ունեցավ երիտթուրքական հեղափոխությունը, մշտապես փորձում էր սիրաշահել օսմանյան իշխանություններին:

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես առաջին և վերջին կառավարիչների գործունեությունը, ովքեր ծագումով հայեր էին:

- Առաջին կառավարիչ Կարապետ Արթին Դաուդյանը վեց տարի տևած պայքարից հետո միայն կարողացավ խաղաղություն հաստատել Լեռնալիբանանում: Նրա կառավարման շրջանում մութասարիֆությունն օրինակելի վարչակազմ ուներ: Դաուդ փաշան մեծ ուշադրություն դարձրեց գյուղատնտեսության և հանրային կրթության զարգացմանը: Մութասարիֆը նախաձեռնեց ճանապարհների բարեկարգման և կառուցման աշխատանքներ, որոնք շատ անհրաժեշտ էին Լեռնալիբանանին: Դաուդ փաշայի կառավարման շրջանում Բեքաայի հարթավայրի արևմտյան մասը դրվեց Լեռնալիբանանի վարչակազմի կառավարման ներքո, որը շատ կարևոր էր մութասարիֆությունը գյուղատնտեսական մթերքով ապահովելու համար: Նա ձգտում էր ավելի ինքնուրույն և կենսունակ դարձնել մութասարիֆությունը, ընդարձակել նրա սահմանները, ինչը չէր կարող դուր գալ օսմանյան կառավարությանը:

Առաջին կառավարչի նպատակն իր իշխանության հանդեպ վստահության մթնոլորտ ստեղծելն էր, որը թույլ կտար կայունություն և զարգացում ապահովել Լեռնալիբանանում:

- Չնայած կառավարման կարճ շրջանին՝ Օհաննես Գույումջյանը ևս փորձեց խաղաղություն և կայունություն ապահովել Լեռնալիբանանում: Օհաննես փաշան համագործակցում էր և՛ Ֆրանսիայի հյուպատոսների, և՛ օսմանյան իշխանությունների հետ: Գույումջյանը խուսափում էր Լեռնալիբանանի տեղական առաջնորդների հետ խնդիրներ ունենալուց՝ շատ լավ գիտակցելով, որ ամենափոքր անկարգությունն իսկ կարող էր օսմանյան զորքերի ներխուժման պատճառ հանդիսանալ, որով վերջ կդրվեր Լեռնալիբանանին շնորհված հատուկ կարգավիճակին: Սակայն պատերազմական պայմաններում հնարավոր չեղավ կանխել թուրքական զորքերի մուտքը Լեռնալիբանան, որից հետո մութասարիֆությունը դրվեց Ալեյի ռազմադաշտային դատարանի իրավասության ներքո: Օհաննես փաշան իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ արեց՝ լիբանանցիներին թուրքական ռազմական իշխանությունների ոտնձգություններից պաշտպանելու համար: 1915 թ. հունիսին Օ. Գույումջյանն իր կամքով հեռացավ

Լեռնալիբանանից՝ չցանկանալով այլևս համագործակցել թուրքական իշխանությունների հետ:

- 1861 թ. Կանոնադրությունը վարչակառավարման արդյունավետ համակարգ ապահովեց Լեռնալիբանանի համար: Լիբանանի մութասարիֆությունն օսմանյան տիրապետության տակ գտնվող մյուս արաբական նահանգներից առանձնանում էր իր ցածր հարկերով: 1861 թ. Կանոնադրությամբ վերացվեցին Լեռնալիբանանի ավատատերերի վարչական ու դատական իրավունքներն ու առանձնաշնորհները: Այդ տարիներին Լիբանանում կառուցվեցին և բարեկարգվեցին ճանապարհներ, կառուցվեցին վարչական շինություններ: Խաղաղությունը նպաստեց նաև Լիբանանի կրթական-մշակութային վերելքին, մեծ ուշադրություն դարձվեց հանրային կրթության զարգացմանը:

- 1861 թ. Լեռնալիբանանին շնորհված Կանոնադրությամբ վերջ դրվեց մարոնի և դրուզ համայնքների միջև մոտ քսան տարի տևած պայքարին: Այս առումով ևս «Լիբանանի օրգանական ստատուտը» արդարացրեց իրեն: Օ. Գույումջյանի կառավարման շրջանում թուրքական իշխանությունները փորձեցին բորբոքել դրուզների հին թշնամանքը մարոնիների հանդեպ, որն առիթ կհանդիսանար ռազմական միջամտության համար, սակայն թուրքական իշխանություններին չհաջողվեց դրուզներին տրամադրել մարոնիների դեմ. հին թշնամանքն այս համայնքների միջև այլևս չկար:

- 1861 թ. Կանոնադրությամբ Լեռնալիբանանը լայն ինքնավարություն էր ստացել և շահեկանորեն առանձնանում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արաբական մյուս նահանգներից: Լիբանանի մութասարիֆությունն իր մութասարիֆով, Վարչական խորհրդով, դատական համակարգով, անվտանգության ուժերով լավ հիմք էր Լիբանան պետության ստեղծման համար: Անհրաժեշտ էր միայն մութասարիֆությանը միավորել պատմականորեն լիբանանյան համարվող տարածքները, որը տեղի ունեցավ 1920 թ. սեպտեմբերի 1-ին «Մեծ Լիբանանի» ստեղծմամբ:

- 1861 թ. Կանոնադրությունը և 1864 թ. նրա փոփոխված տարբերակը հիմք դրեցին կրոնադավանական համամասնական ներկայացուցչության ավանդույթի ձևավորմանը Լիբանանում: Այդ ավանդույթն ամրապնդվեց 1926 թ. սահմանադրությամբ, 1943 թ. սեպտեմբերին կնքված Ազգային դաշինքով, որն այսօր էլ Լիբանանի քաղաքական համակարգի հիմքն է հանդիսանում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Լիբանանի մութասարիֆության կառավարման առանձնահատկությունները (1868-1892 թթ.), ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու, 4 (16), Եր., «Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., 2012, էջ 134-143:

2. Կարապետ Արբին Դաուդ (Դաուդյան) փաշան՝ Լեռնալիբանանի առաջին կառավարիչ (1861-1868 թթ.), Պատմություն և մշակույթ: Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու), 2-րդ հատոր, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 193-198:

3. Լեռնալիբանանի Կանոնադրության փոփոխությունները 1912թ., Կանթեղ: Գիտական հոդվածների ժողովածու, 3 (56), Եր., Ասողիկ, 2013, էջ 163-168:

4. Ռուստամ փաշան՝ Լեռնալիբանանի կառավարիչ (1873-1883 թթ.), ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու, 3 (19), Եր., «Անանիա Շիրակացի» համալսարանի հրատ., 2013, էջ 225-228:

ЕГОЯН АСТХИК ГУРГЕНОВНА

ЛИВАН В ПЕРИОД МУТАСАРИФИИ (1861-1915 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02- «Всемирная история».
Защита состаится 28-го декабря 2014 г, в. 14:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история», действующего при Институте востоковедия НАН РА, по адресу: 0019, г. Ереван, 0019, пр. М. Баграмяна, 24/4.

Диссертационная работа посвящена изучению истории Ливана в период мутасарафии (1861-1915 гг.).

Изучение истории Ливана в рассматриваемый период имеет важное научное значение в виду того, что события, происходившие на протяжении существования мутасарафии (арабск. провинция), имели существенное воздействие на дальнейшую историю Ливана.

По соглашению, состоявшемуся между европейскими державами и османским правительством в 1861 г., Горному Ливану был предоставлен "Органический статут" (Регламент), с помощью которого была предпринята попытка установить мир и равновесие между всеми религиозными общинами, в особенности - маронитами и друзами. Согласно Регламенту 1861 года, Горный Ливан стал автономной мутасарафией в составе Османской империи, управляемой губернатором христианином-неливанцем.

Цели работы:

- Исследовать социально-политическое положение Ливана до Регламента 1861 г.. Изучить религиозно-конфессиональные особенности населения Ливана, прояснить те причины, которые привели к межобщинному конфликту 1860 г..
- Изучить особенности "Органического статута" 1861 г., предоставленного Горному Ливану. Прояснить и подвергнуть анализу политику османского правительства и европейских держав по отношению к Горному Ливану.
- Проанализировать деятельность всех 8-и губернаторов мутасарафии Ливана и, в частности, армян - Карапета Артин Даудяна и Оганеса Гуюмджяна.
- Подвергнуть анализу эффективность "Органического статута", а также роль Регламента в дальнейших политических событиях Ливана.

Данная диссертационная работа, по своему содержанию и структуре, является первым исследованием в армянской историографии, где делается попытка всесторонне изучить историю Ливанской мутасарифии.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

Во ВВЕДЕНИИ обосновывается актуальность выбора темы исследования, определяются его цели и задачи, представляются методологическая основа и научная новизна работы, хронологические рамки темы, практическая значимость работы, а также дается краткий обзор источников и литературы.

В первой главе, которая озаглавлена "ФОРМИРОВАНИЕ ЛИВАНСКОЙ МУТАСАРИФИИ (1861-1868 гг..)", представлены исторические развития в Ливане до 1860 г., причины вражды и конфликта, возникших между маронитами и друзами, а также особый статус, присвоенный Горному Ливану по Регламенту 1861г. В главе подробно анализируется деятельность Карапета Артин Даудяна - как первого губернатора Горного Ливана, деятельность которого высоко оценивают как армянские, так и иностранные исследователи.

Во второй главе диссертации - "ОСОБЕННОСТИ ПРАВЛЕНИЯ ЛИВАНСКОЙ МУТАСАРИФИИ В 1868-1892 ГГ.", мы попытались скрупулезно проанализировать особенности правления Горного Ливана на фоне деятельности губернаторов в данный период (Франко Насри-паша 1868-1873 гг., Рустам-паша 1873-1883 гг., Васа-паша 1883-1892 гг.). Представлены также отношения османского правительства и европейских держав, которые были гарантами Регламента Ливана, и их вмешательство в дела мутасарифов Ливана.

Третья глава диссертации озаглавлена "ОСОБЕННОСТИ ПРАВЛЕНИЯ ЛИВАНСКОЙ МУТАСАРИФИИ В 1892-1915 ГГ.". В ней подробно описываются особенности правления Горного Ливана под руководством последних четырех мутасарифов: Наум-паша (1892-1902 гг.), Музафер-паша (1902-1907 гг.), Юсуф-паша (1907-1912 гг.) и Оганес Гуюмджян (1912-1915 гг.). Обсуждаются также различные требования ливанцев, представленные после младотурецкой революции 1908 г., в связи с дальнейшим статусом и расширением границ Горного Ливана. Подробно прокомментированы изменения Регламента в 1912 г., а также отмена протоколов, закреплявших за Горным Ливаном особый статус в июле 1915 г. османским правительством.

В ЗАКЛЮЧЕНИИ обобщены основные результаты работы. В частности, нами отмечена роль Регламента 1861 г. в формировании традиции религиозно-конфессионального пропорционального представительства в Ливане. Эта традиция была закреплена конституцией 1926 г., а также Национальным пактом, подписанным в сентябре 1943 г., который до сих пор является основой политической системы Ливана.

ASTGHIK G. YEGHOYAN

LEBANON IN THE PERIOD OF MUTASSARIFIYA (1861-1915)

The defense of the dissertation will take place at 14:00, on the 28th of April of 2014, the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of the NAS RA.
Address: Yerevan, 0019, M. Baghramyan Ave., 24/4.
The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History" 07.00.02

SUMMARY

Dissertation is devoted to the study of Lebanese history in the period of mutassarifiya.

The research of Lebanese history has an important significance in the studied period, as the events occurred during the existence of mutassarifiya (in Arabic-province) had an essential effect in the future stages of Lebanese history.

By the granted Règlement given to Mount Lebanon of consent obtained between European powers and Ottoman government, attempts were made to establish peace and balance among all religious communities, especially among Maronites and Druze. By Règlement of 1861 Mount Lebanon became self-governed mutassarifiya within Ottoman Empire, which would be ruled by a Christian non-Lebanese governor.

The objectives of work are:

- To analyze the socio-political state in Lebanon until the Règlement of 1861. Study the confessional characteristics of Lebanese population; clarify those causes, which contributed the intercommunal conflict of 1860.
- To study the particularities of Règlement granted to Mount Lebanon in 1861. Illustrate and examine the policy of Ottoman government and European powers towards Mount Lebanon.
- To analyze the activities of all eight governors of Lebanese mutassarifiya and especially Armenian governors Karapet Artin Daudyan and Ohannes Guyumjyan.
- To examine the effectiveness of special status granted to Lebanon in 1861 and the role of Règlement in the future developments of Lebanon.

Dissertation's topic hasn't been presented by complete study in Armenia yet. The work is the first study, where attempts are made to comprehensively study the history of Lebanese mutassarifiya.

The dissertation is composed of introduction, three chapters, which are divided into subchapters, conclusion and bibliography.

In the INTRODUCTION is spoken about the relevance of the research, goals and tasks of dissertation, the methodological basis and scientific novelty, the practical significance of this research, also the chronological framework of the work are presented, a brief review of sources and literature is given.

In the first chapter which is titled as "THE FORMATION OF LEBANESE MUTASSARIFIYA IN 1861-1868", are presented historical developments of Lebanon till 1860, the causes of hostility and conflict arisen between Maronites and Druze, as well as the special status granted to Munt Lebanon by 1861 Règlement. The activity of Karapet Artin Daudyan (Daud Pasha) as the first governor of Lebanon is thoroughly presented and explained, whose role in the formation of Lebanese mutassarifiya is positively appreciated by both Armenian and foreign authors.

In the second chapter of the dissertation, which is titled as "THE FEATURES OF LEBANESE MUTASSARIFIYA GOVERNMENT IN 1868-1892", we tried to thoroughly analyze the features of Lebanese mutassarifiya government, the activities of governors of Mount Lebanon in that period: Franco Nasri pasha (1868-1873), Rustam pasha (1873-1883), and Vassa pasha (1883-1892). We have also presented the relationships of Ottoman government and European powers, which were considered the guarantors of Règlement, and their interference in the affairs of governors of Mount Lebanon.

In the third chapter, which is titled as "THE FEATURES OF LEBANESE MUTASSARIFIYA GOVERNMENT IN 1892-1915", the features of administration of Mutassarifiya are thoroughly described in the governance period of Naum (1892-1902), Muzafer (1902-1907), Yusuf (1907-1912) pashas and the last governor Ohannes Pasha Guyumjyan (1912-1915). Different requirements concerning the future status and borders of Mount Lebanon presented by the Lebanese after the Young Turks revolution (1908) were also discussed. We have thoroughly illustrated also the revision of Règlement in 1912, as well as the abrogation of protocols concerning the privileged status of Mount Lebanon by Ottoman government in July 1915.

In the CONCLUSION the main results of the dissertation are summarized. In particular, we mentioned the role of Règlement of 1861 in the formation of confessional proportional representation tradition of religious communities in Lebanon. This tradition was strengthened by the Constitution of 1926, and then by National Pact signed in September of 1943, which today is considered the basis of political system of Lebanon.